ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔ

2010թ. առաջին կիսամյակում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶ 2010

Համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից կատարված աշխատանքները 2009թ. վերջին հինգ ամիսների և 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2008թ. դեկտեմբերի 22–ին համայնքի ավագանին ընդունել է 2009թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են՝ 18մլն. 074հազ. 800դրամ, ծախսերը՝ 17 մլն.514հազ.400 դրամ:

2009թ. հողի հարկը հավաքագրվել է 4մլն.908հազ. 100դրամ, որը կազմել է 2009թ. տարեկան պլանի 97.5% –ը:

Տնտեսությունները օգտվել են հողի հարկի արտոնություններից, որոնց նախկինում կուտակված ապառքների գումարները զրոյացվել են:

2009թ. գույքահարկի դիմաց հավաքագրվել է 3մլն. 577հազ. դրամ գումար, որը կազմում է 2009թ. տարեկան պլանի 99.4%–ը:

2009թ. դեկտեմբերի 25-ին համայնքի ավագանին ընդունել է 2010թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմում են 22մլն. 651 հազար 256դրամ, ծախսերը՝ 22 մլն. 651 հազար 220 դրամ:

Հողի հարկ նախատեսվել է 5մլն.480հազար դրամ, որից 1-ին կիսամյակում հավաքագրվել է 1մլն. 625 հազար 500 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 30% –ը:

Գույքահարկ նախատեսվել է 3 մլն. 720 հազար դրամ, որից 1-ին կիսամյակում հավաքագրվել է 1մլն. 274 հազար 800 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 34.3%-ը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետարանին օգնության խնդրանքով դիմած սոցիալապես անապահով բնակիչներին տրվել է դրամական օգնություն 150 հազար դրամ, որից 50 հազար դրամը տրվել է Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած վետերաններին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Արտավազ համայնքի 0-10 տարեկան երեխաներին ամանորյա տոնակատարությունների կապակցությամբ բաժանվել են նվերներ 302 հազար 400 դրամ գումարի չափով: Արտավազ համայնքի Արտավազ և Փյունիկ գյուղերի դպրոցների 2009-2010թթ. ուս. տարվա շրջանավարտներին համայնքի ղեկավարի կողմից բաժանվել են նվերներ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Եռամսյակային հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են առևտրի թվով 6 թույլտվություններ ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի իրացման համար, որոնցից գանձվել են տեղական տուքերի համապատասխան գումարներ:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. փետրվարի 25-ի թիվ 241-Ն որոշման 3-րդ մասի 1-ին կետով Կոտայքի մարզի Արտավազ համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ է ճանաչվել 96.0 հա հողատարածքներ 2010թ. մարտի 19-ին կայացել է Արտավազ համայնքի վարչական սահմաններում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք, որի արդյունքում օտարվել է 3.75հա հողատարածքներ: Աճուրդի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 2մլն.862 հազար 117դրամ: